ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մայիսի 2024 թվականի N 707 - Ա

ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածը, «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, 25-րդ հոդվածի 2-րդ մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1067-Ն որոշմամբ հաստատված կարգի 1-ին և 10.1-ին կետերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմերի կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ձեռք բերված գույքերը նվիրաբերել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ, Տավուշի մարզի Իջևան և Դիլիջան համայնքներին՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության անունից սույն որոշման հավելվածների

ցանկում նշված համայնքների ղեկավարների հետ կնքել նվիրաբերության պայմանագրեր՝ դրանցում նախատեսելով դրույթ, որ պայմանագրերի կնքման և հաշվառման հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման համայնքների միջոցների հաշվին:

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին՝ սույն որոշման 2-րդ կետում նշված պայմանագրերը կնքելուց հետո եռամսյա ժամկետում համապատասխան համայնքների հետ համատեղ ապահովել գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

17.05.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ